ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Ձիթհանքովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ) թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև 1)

2.Փաստաթուղթ (դիպլոմ), «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի» 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն(Ձև 4)

5.Թափուր տեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները դրանց առկայության դեպքում,

6.Մեկ լուսանկար՝ 3*4 չափ,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **մարտի 27-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00,** բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի :

Մրցույթը տեղի կունենա **մարտի 29 –ին ժամը 15:00-ին** Շիրակի մարզի Ձիթհանքովի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 094-82-13-76 հեռախոսահամարով: